ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2018թ. սեպտեմբերի 17-21 ԱՄՆ (ք.Վաշինգտոն) կատարած գործուղման արդյունքների վերաբերյալ

1. **Անուն, ազգանունը՝**

Կարեն Թամազյան

2. **Զբաղեցրած պաշտոնը՝**

ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ

3. **Գործուղման վայրը և ժամկետները՝**

ք.Վաշինգտոն, ԱՄՆ, 2018թ. սեպտեմբերի 17-21-ը

4. **Հրավիրող կողմը՝**

Ասիական զարգացման բանկ և Միջամերիկյան զարգացման բանկ

5. **Գործուղման նպատակը՝**

Մասնակցություն Ասիա-Խաղաղօվկիանոսյան պետական էլեկտրոնային գնումների ցանցի 4-րդ համաժողովին և Պետական գնումների գլոբալ կոնֆերանսին

6. **Քննարկված թեմաները՝**

✓ ***Տեխնոլոգիաները պետական գնումներում***

Տարբեր երկրների պաշտոնյաների կողմից կարևորվեց պետական գնումների իրականացումը էլեկտրոնային համակարգերի միջոցով, պետական գնումներում նոր տեխնոլոգիաների կիրառում, այդ տեխնոլոգիաների անվտանգության ապահովումը: Ներկայացվեցին նաև խնդիրները և ձեռքբերումները:

Կարևորվեց պետական գնումների միջոցով պոտենցիալ շուկաների մուտքի հնարավորությունները, էլեկտրոնային գնումների առցանց շուկայի հասանելիության վերաբերյալ տեղեկատվության կիրառումը որպես շուկայի մուտքի հնարավորությունների բացահայտման ռեսուրս:

✓ ***Նոր տեխնոլոգիաների հասանելիությունը և կիրառումը***

Ներկայացվեցին տարբեր երկրներում գործող էլեկտրոնային գնումների համակարգերը, նրանց արդյունավետությունը և փորձը՝ ուղղված էլեկտրոնային գնումների

արդյունավետության բարձրացմանը: Ներկայացվեցին նաև պետական համակարգի բարեփոխումների մեջ պետական գնումների բարեփոխումների անհրաժեշտությունը և ճանապարհները: Հայկական կողմը ներկայացրեց Հայաստանյան փորձը, էլեկտրոնային համակարգը, նոր ներդրվող վերլուծական գործիքները և այլն: Ըստ ներկաների, Հայկական փորձը համահունչ է լավագույն միջազգային փորձին և ուսանելի այլ երկրների համար: Կարևորվեց նաև վերլուծական գործիքների ներդրումը, որոնք օգտակար կլինեն թե գնումներ կազմակերպողներին, թե գնումներին մասնակցողներին, թե հասարակական կազմակերպություններին ու վերահսկողություն իրականացնող ինստիտուտներին: Նշվեց նաև ՀՀ-ում բաց պայմանագրային տվյալների միջազգային ստանդարտի հիման վրա պետական գնումներով ձևավորված գների վերլուծության էլեկտրոնային համակարգի ներդրման ուղղությամբ իրականացված աշխատանքները:

✓ ***Պետական գնումների էլեկտրոնայնացման մոդելները և հետագա քայլերը***

Այս թեմային շրջանակում ներկայացվեցին տարբեր էլեկտրոնային մոդելներ՝ Procurement 2.0 և 3.0 : Ներկայացվեց նաև, թե ինչպես կարող է օգտակար լինել այս համակարգերի ներդաշնակեցումը պետական ֆինանսների կառավարման այլ համակարգերի հետ, ինչպես նաև եկամուտների հավաքագրման համակարգի հետ: Խիստ կարևորվեց Monitoring Procurement 4.0 համակարգը, որը գնումների գործարքների իրականացման, վերլուծության, վերահսկողության համակարգէ: Այն թույլ է տալիս տեսանելի դարձնել գնային շեղումները, ապրանքների նկարագրերի շեղումները և աջակցում է գնումներ պլանավորողներին, գնումներ իրականացնողներին, հսկողություն իրականացնողներին և մատակարարներին արդյունավետ իրականացնել իրենց աշխատաքները: Նա նաև դրդում է գնումները դարձնել արդյունավետ, օգտակար և տնտեսող:

Ներկայացված թեմաները բավական արդիական են և անհրաժեշտ է քայլեր իրականացնել ՀՀ-ում գնումների վերլուծական համակարգի ամբողջական ներդրման և օգտագործման ուղղությամբ:

✓ ***ԱՋԲ Գնումների բարեփոխումները***

Այս թեմային շրջանակում ներկայացվեց Ասիական Զարգացման Բանկի գնումների ռեֆորմի թարմացումները և Բանկի էլեկտրոնային գնումների աշխատակարգը: Նշվեց նաև, որ որոշ երկրներում ԱԶԲ-ն անցել այդ երկրների համակարգերով գնումների իրականացմանը:

7. Գործուղվողը՝

ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ Կարեն Թամազյան

8. Ստորագրությունը, ամսաթիվը

26.09.2018թ.